

# Ֆուտբոլիստների նկարներ

Ժամանակի սահմանափակում՝ 0.3 վայրկյան  
Հիշողության սահմանափակում՝ 128 MB  
Կշիռը՝ 100 միավոր

## Շարադրանք

Արան ֆուտբոլիստների նկարների հավաքածու ունի: Բոլոր նկարները նույն չափսի են քառակուսաձև են: Նա փորձում է նկարները դասավորել սեղանին այնպես, որ բոլոր նկարները իրար կողք և իրար տակ շարելուց հետո ստացվի ուղղանկյուն:

Կախված նկարների քանակից կարող են տարբեր ուղղանկյուններ ստացվել: Հարկավոր է պարզել փոքրագույն պարագծով ուղղանկյան պարագիծը:

## Մուտքային տվյալներ

Տրված է մեկ բնական թիվ՝ նկարների քանակը, որը չի գերազանցում 100000 -ը:

## Ելքային տվյալներ

Արտաձել նկարներով կազմված փոքրագույն պարագծով ուղղանկյան պարագիծը:

## Օրինակ

Մուտք	Ելք
10	14
25	20